«Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի «ա» ենթակետի համաձայն՝ ավել վճարված պետական տուրքը ենթակա է հետ վերադարձման:

Դատարանը արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից պետական տուրքը վճարվել է ավել, մասնավորապես՝ վճարվել 40,000 ՀՀ դրամ (հիմք՝ 6886-4041-2433-8995-9419 վճարման ծածկագիր), մինչդեռ վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 30,000 ՀՀ դրամ:

Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ ավել վճարված պետական տուրքը «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման Հայցվորին:

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 192-րդ, 194-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Պրոյեկտ ԻնտերԻնվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի ապարանի համայնք հիմնարկի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Ապարան համանքի ղեկավարի 11.03.2025թ. թիվ 173 որոշումը՝ չկատարված 240.600.360 ՀՀ դրամի մասով 07.06.2023թ. «Ապարանի համայնքապետարանի և «ՊՐՈՅԵԿՏ ԻՆՏԵՐ-ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ–ի միջև կնքված «Ապարան համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ-ԱՄ-ՀԲՄԱԾՁԲ-36/23» Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին անվավեր ճանաչելու և որպես հետևանք Ապարան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի 24.03.2025թ. թիվ 211-Ա որոշումը՝ «Պրոյեկտ ԻնտերԻնվեստ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին», անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից «Պրոյեկտ ԻնտերԻնվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վերադարձնել պետական տուրքի ավել վճարված 10,000 ՀՀ դրամ գումարը:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEB6-4B75-4C70-97E3 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am